ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ԹՐԵՐ ԵՎ ԴԱՇՈՒՅՆՆԵՐ

ՄԱՐԻԱ ՊՈԴՐԵԲՈՎԱ (Մոսկվա), ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԱՆ

Միևնույն հավաքածուներում տարբեր մշակույթների պատկանող իրերի համադրումը, անկասկած, հետաքրքրական է ինչպես ժամանակագրական, այնպես էլ պատմական տեսակետից։ Այդպիսի զուգակցում նկատվում է Անդրկովկասի այսպես կոչված սկյութական հուշարձաններում, որոնք վերջերս հաճախակի են գրավում ուսումնասիրողների ուշադրությունը[1]։

Անդրկովկասում հայտնաբերված սկյութական մշակույթին վերաբերող իրերի մեջ (նետասլաքներ, կացիններ, ձիասանձի մասեր, ճարմանդներ և այլն) մեծ խումբ են կազմում թրերը և դաշույնները։ Ներկայումս այդ տարածքից հայտնի է մոտ 30 այդպիսի իր, որոնց մեծ մասը հայտնաբերվել է ստույգ թվագրվող նյութերի հետ. սա հնարավորություն է տալիս դրանք ևս ճշգրիտ թվագրելու։ Այսպես, օրինակ, Թեյշեբաինիի միջնաբերդի մառաններում, տիպիկ ուրարտական զենքերի հետ[2], *հայտնաբերվել են մի թուր և երկու դաշույն։ Սկյութական մի այլ թուր, ուրարտական հարուստ նյութերի հետ, հայտնաբերվել է Հայկական ՍՍՀ Մարտունու շրջանի Գեղհովիտ գյուղի պատահականորեն բացված դամբարանում*[3] *(ուրարտական Ալբերդ կոչվող ամրոցից ոչ հեռու)։ Վրացական ՍՍՀ Դվանիի №№ 2 և 11 դամբարաններում, սկյութական այլ իրերի հետ, հայտնաբերվել են երկու դաշույն, իսկ № 4 դամբարանում՝ ոլորված ծայրով դաշույնի պատյան, որը բնորոշ է Հյուսիսային Կովկասի սկյութական վաղ հուշարձաններին*[4]։ *Դաշույններ են հայտնաբերվել նաև Սամթավրոյի №№ 27, 50 և 295 դամբարաններում*[5]։ *Դաշույնները հայտնի են Թլիի №№ 68, 85, 93, 128, 139, 164 և 216 դամբարաններից, ուր դրանք, որպես կանոն, հանդիպում են կոբանյան, մասամբ էլ սկյութական,*

---

[1] Б. Б. Пиотровский, Скифы в Закавказье («Ученые записки Ленинградского государственного университета», серия исторических наук, вып. 13, 1949), *նույնի՝* Скифы и древний Восток («Советская археология» *(այսուհետև՝* СА), XIX, 1954); М. С. Пирцхалава, Памятники скифской архаики на территории древней Грузии (автореферат кандидатской диссертации, Тбилиси, 1975), *նույնի՝* К вопросу о распределении памятников скифской культуры в материальной культуре Грузии («Вопросы археологии Грузии», 1978, I,); Б. В. Техов, Скифские элементы в материальной культуре Юго-Осетии («Вопросы истории народов Кавказа», I, Тбилиси, 1966); М. Н. Погребова, Памятники скифской культуры в Закавказье («Средняя Азия и Кавказ в древности» (в печати)).

[2] Б. Б. Пиотровский, Город бога Тейшебы (СА, 1959, № 2, с. 175, рис. 6, I).

[3] *Դամբարանը հետախուզել են Ա. Փիլիպոսյանը և Լ. Խաչատրյանը. նյութերը պատրաստվում են հրատարակության։*

[4] С. И. Макалатия, Раскопки Дваиского могильника (СА, XI, 1949).

[5] Р. М. Абрамишвили, К вопросу об освоении железа на территории Восточной Грузии («Вестник Государственного музея Грузии», т. XXXII, 1961).

զենքերի և ձիասանձերի հետ[6]։ Սկյութական զենքի, հատկապես դաշույնների, համակենտրոնացում է նկատվել Բրիլիի դամբարանադաշտում։ Գ. Ֆ. Գոբեջիշվիլու վկայությամբ, միայն մեկ դամբարանից հայտնաբերվել է 12 դաշույն (ցավոք, այդ նյութերը մասամբ են հրատարակված)[7]։ Մեկական դաշույն է գտնվել Մեծ Գուադիխուի[8] և Սուխումի[9] լեռան, իսկ երկուսը՝ Մերխեուլիի դամբարանադաշտերից[10]։ Պատահականորեն դաշույններ են հայտնաբերվել Սիդնախիում, Աբխազիայում[11] և Ստեփանակերտում (պահվում է տեղի թանգարանում)։ Սկյութական դաշույն է գտնվել նաև Մուսիերիում[12]։

Այսպիսով, Անդրկովկասում դաշույնները հիմնականում հայտնաբերվել են Արևմտյան և Կենտրոնական Վրաստանից ու Հայաստանի ուրարտական կենտրոններից՝ սկյութական այլ զենքերի կամ ուրարտական իրերի հետ միասին։

Անդրկովկասում հայտնաբերված դաշույնները պատկանում են այդ զենքի ամենահնագույն տիպին։ Դրանք հիմնականում ունեն քառակող գլխիկ և բողբոջաձև, սրտաձև կամ թիթեռաձև ելուստներ, որոնք տեղադրված են դաստակից շեղբին անցման մասում և պատկանում են սկյութական թրերի ու դաշույնների I խմբին[13]։ Ելուստների ձևերը ստույգ որոշել դժվար է, որը բացատրվում է դրանց վնասվածքներով և ոչ միշտ ակնհայտ արտահայտվածությամբ։ Այս հանգամանքը երբեմն առանձին հեղինակների հանգեցնում է միևնույն թրի տարբեր բնորոշումների։ Ա. Ի. Մելյուկովան նշում է, որ սկյութական թրերի և դաշույնների միևնույն տիպերի մեջ անգամ նկատվում են զգալի զանազանություններ[14]։ Ե. Վ. Չերնենկոն առաջարկում է ընդհանրապես հրաժարվել ելուստների ձևերի բնորոշումներից և դաշույնները դասակարգել՝ ելնելով դրանց նկարագրությունից կամ հիմնվելով չափանմուշի վրա[15]։

Անդրկովկասյան թրերը և դաշույնները միավորվում են ելուստների ձե-

---

6 Б. В. Техов, *նշվ. աշխ., նույնի՝* Раскопки Тлийского могильника в 1960 г., (СА, 1963, № 1), *նույնի՝* Археологические раскопки 1962 г. в Юго-Осетии (СА, 1965, № 2).

7 Г. Ф. Гобеджишвили, Археологические раскопки в Советской Грузии, Тбилиси, 1952 (на груз. яз.), табл. XL, III, I; XL, V, XL, IV, 3—5.

8 М. М. Трапш, Труды, т. 2, Сухуми, 1973, с. 17—76.

9 А. Н. Калантадзе, Археологические памятники Сухумской горы, т. VIII, Сухуми, 1954, с. 78; М. М. Трапш, Грунтовые погребения с инвентарем скифского типа в сел. Куландрхва («Труды Абхазского института языка, литературы и истории», XXIV, Сухуми, 1951).

10 М. В. Барамидзе, Мерхеульский могильник, Тбилиси, 1977.

11 Сигнахский краеведческий музей, инв. № 1895; М. С. Пирцхалава, Памятники скифской архаики..., с. 17; М. М. Трапш, Новая археологическая находка в Абхазии («Краткие сообщения Института истории материальной культуры» *(այսուհետև՝* КСИИМК), вып. 53, М., 1954); *նույնի՝* Труды, т. I, Сухуми, 1970, с. 193.

12 J. de Morgan, Mission scientifique au Caucase, Paris, 1889, f. 39; *նույնի՝* La Prèhistoire Orientale, III, Paris, 1927, p. 288.

13 А. И. Мелюкова, Вооружение скифов, М., 1964, с. 47—52.

14 *Նույն տեղում, էջ 47։*

15 Е. В. Черненко, Древнейшие скифские парадные мечи (Мельгунов и Келермес) («Скифия и Кавказ», Киев, 1980, с. 11).

վերով։ Քանի որ սկյութական թրերի և դաշույնների հիմնական տարբերությունը դրանց երկարության մեջ է[16], ուստի դրանք քննում ենք միասին։

Ամենաբնորոշը Կարմիր բլրից հայտնաբերված սկյութական տիպի թուրն



Անդրկովկասի տարբեր վայրերում հայտնաբերված սկյութական թրեր և դաշույններ. նկ. 1, 2. Կարմիր բլուր, 3. Գեղհովիտ, 4. Բրիլի, 5. Մերխեուլի, 6. Թլի, դամբ. № 128, 7. Թլի, դամբ. № 85, 8. Կոլխիդա, 9. Թլի, դամբ. № 164, 10. Թլի, դամբ. № 139, 11. Սուխումի լեռ, 12. Մուսիերի, 13. Մագիրո, 14—17. Սամթավրո, 18. Թլի, դամբ. № 129, 19. Թլի, դամբ. № 93, 20. Թլի, դամբ. № 94, 21, Թլի, դամբ. № 205, 22. Թլի, դամբ. № 216, 23. Թլի, դամբ. № 298, 24. Թլի. դամբ. № 68, 25. Թլի, դամբ. № 106, 26. Ստեփանակերտ։

է, որն իր երկարությամբ (88 սմ) գերազանցում է հայտնի բոլոր սկյութական թրերին։ Սրա դաստակը կազմված է իրար միացված երեք ձողերից և գլխիկից։

16 Ա. Ի. Մելյուկովան 17—40 սմ երկարություն ունեցողները համարում է դաշույն, իսկ 50—80 սմ երկարություն ունեցողները՝ թուր (А. И. Мелюкова, նշվ. աշխ., էջ 46)։

Կենտրոնական ձողի վրա, անմիջապես քառակող գլխիկի տակ, կա կլոր ելուստ, եռանկյունաձև ելուստը նման է սրտաձևի։ Դաստակի վրայի կլոր ելուստի առկայությունը հնարավորություն է տալիս Կարմիր բլրի թուրը դասել հնագույն սկյութական թրերի շարքը, որոնք ունեն նման ելուստներ կամ օղակներ[17]։ Բրոնզե դաստակով, երկաթե շեղբով նմանօրինակ թուր հայտնի է Կամիշինից[18]։ Դաստակի ձևով Կարմիր բլրի թուրը[19] համեմատվում է Կելերմեսի, Մելգունովի[20], Կուրիլովկայի, Լուգովոյի, Ակտյուբինսկի թրերի[21] հետ։

Սրտաձև ելուստներ կան նաև Բրիլիից հայտնաբերված մի քանի դաշույնների վրա[22], որոնք տարբերվում են երկար ու բարակ քառակող գլխիկներով։ Անդրկովկասում ավելի հաճախ են հանդիպում թիթեռաձև ելուստներով դաշույններ ու թրեր։ Այդպիսիք հատկապես շատ են գտնվել Սամթավրոյից (չափսերն են՝ 33—47 սմ)։ Իրենց ձևով դրանք մոտ են միմյանց, ունեն բռնակների քառակող գլխիկներ (№ 50 դամբարանից հայտնաբերվածի վրա դա չի պահպանվել) և թիթեռի թևերի նման ելուստներ։ №№ 27 և 212 դամբարաններից հայտնաբերվածները, Կարմիր բլրի թրի նման, ունեն եռամաս դաստակներ, շեղբերը երկար են ու նեղ։

Սամթավրոյից հայտնաբերվածներին շատ մոտ է Սիգնախիի գավառագիտական թանգարանում պահվող, Մադիրո գյուղից պատահականորեն գտնված դաշույնը, որի գլխիկը չի պահպանվել։

Անդրկովկասի նշված տիպի դաշույններին շատ մոտ են Դնեպրոպետրովսկի թանգարանի դաշույնը և Մոսկվայի պատմության պետական թանգարանում պահվող դաշույնի դաստակը[23]։

Թլիի դամբարանադաշտից հայտնաբերված դաշույնները (երկարությունները՝ մոտ 40 սմ) ունեն ավելի կլորաձևն թիթեռաձև ելուստներ և ավելի զանգվածեղ քառակող գլխիկներ[24]։ № 164 դամբարանում հայտնաբերված դաշույնը գլխիկի տակ ունի բնորոշ կլոր անցք, իսկ դաստակը եռանիստ է։ Նման դաստակներ ունեն №№ 85 և 128 դամբարաններից հայտնաբերված դաշույնները։ Թլիի դաշույնները դաստակների և շեղբերի ձևերով ու երկարության հարաբերությամբ ամենից շատ մոտենում են Մինեբալնիե Վոդի քաղաքի մոտ գտնվող դամբարաններից հայտնաբերվածներին[25]։

Դվանիից գտնված դաշույններից մեկը ելուստի ձևով նման է Թլիից հայտնաբերվածներին, սակայն ունի ավելի կարճ, եռանկյունաձև շեղբ, որը դաշույնի երկարության գրեթե կեսն է։ Դվանիից հայտնաբերված երկրորդ

---

17 А. И. Шкурко, Скифский кинжал из Днепропетровского музея («Историко-археологический сборник», М., 1962).

18 Նույն տեղում, նկ. 4։

19 Б. Б. Пиотровский, Город бога Тейшебы, рис. 1, с. 175; Е. В. Черненко, նշվ. աշխ., էջ 11։

20 К. Ф. Смирнов, Вооружение савроматов, М., 1961, с. 15.

21 Նույն տեղում։

22 Պահվում են Թբիլիսիի պետական համալսարանի թանգարանում։ Շնորհակալություն ենք հայտնում Ο. Մ. Ջափարիձեին՝ թանգարանի ցուցադրության հետ ծանոթացնելու համար։

23 А. И. Шкурко, նշվ. աշխ., նկ. 1, 3։

24 Մի քանի օրինակների վրա ելուստների ձևը պարզ որոշել հնարավոր չէ։

25 Н. М. Егоров, Могильник скифского времени близ г. Минеральные Воды (КСИИМК, 58, рис. 20, 1); В. Б. Виноградов, Центральный и Северо-восточный Кавказ в скифское время, Грозный, 1972, рис. 13, 1, 3.

դաշույնը վատ է պահպանված, բայց, ըստ երևույթին, ունի նույն ձևը (երկուսի երկարություններն էլ մոտ 30 սմ է)։ Դաստակի և շեղբի նման հարաբերություն կա նաև Բրիլիից հայտնաբերված դաշույնների մոտ, որոնցից մի քանիսին ունեն թիթեռնանման ելուստներ[26]։ Ինչպես արդեն նշվել է, Բրիլիի դաշույնների առանձնահատկությունը դրանց դաստակների երկար գլխիկներն են, որպիսիր սկյութական ձևերի մոտ բացակայում են, բայց հայտնի են Հյուսիսային Կովկասից[27]։

Մերխեուլիի դամբարանադաշտում հայտնաբերված, վատ պահպանված դաշույնը, ըստ երևույթին, նույնպես ունեցել է թիթեռաձև ելուստ, բայց բնորոշ է իր կարճ, լայն շեղբով, որը մի փոքր գերազանցում է դաստակի երկարությանը (ընդհանուր երկարությունը 35 սմ է)։ Նույն ձևի է նաև Մեծ Գուադիխուից հայտնաբերված դաշույնը։ Մ. Մ. Տրապշը վերջինիս ելուստը համարում է սրտաձև, բայց դաշույնի վատ պահպանվածությունը հնարավորություն չի տալիս ստույգ որոշել այն։

Գեղհովիտից հայտնաբերված թուրը տարբերվում է վերը նշվածներից համեմատաբար երկար դաստակի գլխիկով և ունի թիթեռաձև ելուստ, որի վերին ուղիղ կողմը հիշեցնում է Կելերմեսից հայտնաբերված թրին և Թլիի № 128 դամբարանից գտնված թրի ելուստներին։

Թիթեռաձև ելուստով վերջին դաշույնը բրոնզե պատյանի մեջ պատահականորեն հայտնաբերվել է Աբխազիայի Կոլխիդա գյուղի մոտ։ Դաշույնի գլխիկը ջարդված է (պահպանված մասի երկարությունը 31 սմ է)։ Պատյանը զարդարված է ոլորված քուղով, եռանկյունիներով, ակնոցաձև և օձաձև նախշերով։ Պատյանի կողքին ամրացված է քուղով և ոլորապտույտ զարդարված մի թիթեղ։ Այս դաշույնի սկյութական ձևը և տեղական զարդամոտիվների համատեղությունը եզակի երևույթ է անդրկովկասյան մշակույթում[28], իսկ պատյանի կողքի թիթեղը հեռավոր նմանություն ունի սկյութական թրերի պատյանների ելուստներին և դրա զարդանմուշները պարզորոշ ցույց են տալիս, որ այն պատրաստել են տեղի վարպետները, որոնք ընդօրինակել են թրերի պատրաստման սկյութական ձևը։ Այս առումով հետաքրքրական է Թեյշեբաինիում հայտնաբերված քառակող գլխիկով, ուղիղ դաստակով երկաթե դաշույններից մեկը, որը հիշեցնում է սկյութական թուր, բայց ելուստի փոխարեն ունի բրոնզե թիթեղից օղակ, որը բնորոշ է ուրարտական թրերին[29]։ Անդրկովկասում նմանօրինակ հիբրիդային ձևեր քիչ են հայտնի և դրանք արտացոլում են մեկ զենքի վրա տարբեր ձևերի զուգակցման զարգացում չստացած փորձը։

Անդրկովկասում հայտնաբերված սկյութական դաշույնների մեջ աչքի են ընկնում մի քանի օրինակներ, որոնց ելուստները կարող են համարվել բողբոջաձև, թեև, ինչպես վերը նշեցինք, անդրկովկասյան դաշույնների ելուստների ձևերը պայմանական են։ Այդպիսիք են Թեյշեբաինիի և Բրիլիի դաշույններից մեկական օրինակներ[30]։

---

26 Г. Ф. Гобеджишвили, նշվ. աշխ., աղ. XL, IV, XL, V.

27 В. Б. Виноградов, նշվ. աշխ., նկ. 32, I, տե՛ս նաև էջ 102, ծան. 1։

28 М. М. Трапш, Новая археологическая находка в Абхазии, с. 193; М. С. Пирцхалава, Памятники скифской архаики..., с. 11.

29 Б. Б. Пиотровский, Город бога Тейшебы, рис. 6, 3.

30 Г. Ф. Гобеджишвили, նշվ. աշխ., աղ. XL, 3։

Անդրկովկասում հայտնաբերված սկյութական թրերը և դաշույնները հիմնականում ունեն քառակող գլխիկ և սրտաձև, թիթեռաձև, բողբոջաձև ելուստներ։ Դրանք սկյութական զենքի ամենահնագույն տեսակներն են և թվագրվում են մ. թ. ա. VII դ. II կեսով ու VI դ.[31]։ Անդրկովկասյան նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում վերաբերում են մ. թ. ա. VII դ. II կեսին և VII դ. սկզբին։ Այս թվագրության համար խիստ կարևոր են Անդրկովկասում հայտնաբերված սկյութական և ուրարտական զենքերը, որոնց մեջ վճռորոշ դեր են խաղում Թեյշեբաինիի նյութերը։ Սրանք անհերքելիորեն վկայում են, որ Կարմիր բլրում մ. թ. ա. VII դ. դաշույնը քաջ հայտնի էր։ Չնայած Թեյշեբաինիի անկման ստույգ թվականը հայտնի չէ, սակայն վերջինս չէր կարող մեդա-լիդիական մ. թ. ա. 590—585 թթ. պատերազմից շատ ավելի ուշ անկում ապրել, պատերազմ, որի ընթացքում Ուրարտուն, իբրև պետական միավորում, դադարում է գոյություն ունենալուց։ Անգամ եթե Թեյշեբաինին կործանվել է ոչ թե մեդացիների, այլ սկյութների կողմից, ինչպես ենթադրում է Բ. Բ. Պիոտրովսկին[32], ապա դա չէր կարող Ուրարտուի հարավային կենտրոնների անկումից ոչ շատ ուշ լինել, այսինքն՝ մ. թ. ա. VI դ. սկզբից ոչ ուշ։ Սկյութական կամ սկյութական տիպի զենքերը Թեյշեբաինիում, անկասկած, երևան են եկել դեռ քաղաքի ակտիվ գործունեության ընթացքում։

Զենքերի ուրարտական և սկյութական ձևերի զուգակցում նկատվում է նաև Գեղհովտի և Սամթավրոյի նյութերի մեջ։ Սամթավրոյի դամբարաններում սկյութական զենքը կամ անմիջապես զուգակցվում է ուրարտականի հետ (№№ 71, 83 դամբարաններում), կամ ուղեկցվում է ուրարտական նյութերով։ Սա վկայում է, որ թիթեռաձև կամ դրան մոտ ելուստներով թրեր և դաշույններ Անդրկովկասում քաջ հայտնի էին արդեն մ. թ. ա. VII դ. II կեսից և VI դ. սկզբից։

Բ. Վ. Տեխովը բրոնզե դաստակ ունեցող Թլիի երկաթե դաշույնը թվագրում է մ. թ. ա. VIII դարով[33]։ Այդ թվագրման համար իբրև կռվան է ծառայել դաշույնի երկմետաղ կազմը։ Մ. Ս. Պիրցխալավան, ելնելով Թլիի դաշույնի ձևի առանձնահատկություններից և Անդրկովկասում ու Մերձսևծովյան տարածքում երկմետաղ զենքի՝ հատկապես կացինների առկայությունից, առաջարկում է այն թվագրել մ. թ. ա. VI դարով[34]։

Անդրկովկասում երկմետաղ թրերն ու դաշույնները հանդես են գալիս մ. թ. ա. IX—VIII դդ.[35], բայց հարատևում են մինչև մ. թ. ա. VI—V դդ.[36]։ Երկմետաղ սակավաթիվ դաշույններ, որոնք իրենց ձևերով նման են մ. թ. ա. VII—VI դդ. երկաթից պատրաստվածներին, հայտնի են նաև Կովկասի սահ-

---

31 А. И. Мелюкова, նշվ. աշխ., էջ 47—52։

32 Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, с. 138.

33 Б. В. Техов, Тлийский могильник и проблема хронологии культуры поздней бронзы—раннего железа Центрального Кавказа (СА, 1972, № 3).

34 М. С. Пирцхалава, նշվ. աշխ., էջ 12։

35 А. А. Мартиросян, Раскопки в Кировакане и некоторые памятники раннсурартского периода (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1956, № 9, էջ 76); С. А. Есаян, Оружие и военное дело Древней Армении, Ереван, 1966, с. 83.

36 С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976, с. 151.

մաններից դուրս[37]։ Ակտյուբինսկի մոտ գտնվող Կիզիլտաու բնակավայրից հայտնաբերված դաշույնը, Կ. Ֆ. Սմիռնովը համեմատում է մասնավորապես Թելշերաինից հայտնաբերված թրի և Բրիլիի դաշույնի հետ[38]։

Բացի նշված բազմաքանակ սկյութական թրերից և դաշույններից, Անդրկովկասում մեկական օրինակներով հանդիպում են նաև քառակող գլխիկով և նույնաձև ելուստով դաշույններ։ Այդպիսի մի դաշույն Ժ. Մորգանը հայտնաբերել է Դեբեդ գետի ափից կատարված պեղումների ժամանակ, մյուսը՝ Բրիլիի դամբարանադաշտում։ Սրանք երկուսն էլ ունեն կարճ, եռանկյունաձև շեղբ և 25 սմ երկարություն։ Դեբեդ գետի ափից հայտնաբերված դաշույնի դաստակի վրա կա երկու ուղղահայաց ակոս, իսկ Բրիլիից հայտնաբերվածի գլխիկի վրայով անցնում են հորիզոնական մի քանի ակոսներ։ Սկյութական զենքի մեջ նմանօրինակ դաշույններ հազվադեպ են։ Ա. Ի. Մելյուկովան դրանք դասում է սկյութական թրերի և դաշույնների I խմբի IV տիպին ու ենթադրում, որ դրանք Սկյութիայում երևան են եկել հունական կսիֆոսի ազդեցությամբ, որոնք հանդիպում են Կերչի թերակղզու հունա-բարբարոսական դամբարաններում և թվագրվում մ. թ. ա. V դարով[39]։ Այդ դաշույնները հայտնի են նաև Միջին Դնեպրի շրջանից և սարմատական տարածքից, ուր դրանք թվագրվում են մ. թ. ա. VI դ. վերջով և V դ. սկզբով[40]։ Մ. թ. ա. VI—V դդ. են վերաբերում Հյուսիսային Կովկասում հայտնաբերված ուղիղ կողով, քառակող գլխիկով և ելուստով դաշույնները, որոնց համար, ինչպես ենթադրում է Վ. Բ. Վինոգրադովը, այդ հատկանիշներն ամենաբնորոշն են[41]։

Դեբեդում և Բրիլիում հայտնաբերված նյութերի հավաքածուները հիմք են տալիս Անդրկովկասի այս դաշույնները թվագրել մ. թ. ա. VI դ. ոչ ուշ։ Սակայն դրանց (փոքրիկ եռանկյունաձև շեղբով դաշույններ) լրիվ նման համեմատական նյութ մեզ դեռ հայտնի չէ։ Անդրկովկասում հազվադեպ են հանդիպում բռնակներն անտենաձև ելուստներով զարդարված դաշույններ։ Ըստ երևույթին, այդպիսի ելուստ ունի նաև Թլիի № 139 դամբարանից հայտնաբերված դաշույնը, որի բռնակի ելուստը մոտ է թիթեռաձևին։ Սկյութական մշակույթի բռնակներն անտենաձև ելուստներով զարդարված դաշույնները թվագրվում են մ. թ. ա. VI—V դարերով։ Ինչպես նշել է Մ. Ս. Պիրցխալավան, Թլիի դաշույնի ընդհանուր ձևը (որը նման է այդ դամբարանադաշտում հայտնաբերված մյուս դաշույններին) և դամբարանի նյութը հնարավորություն չեն տալիս Թլիի այդ դաշույնը թվագրել մ. թ. ա. VI դ. ավելի ուշ։

Բռնակի անտենաձև ելուստով մի դաշույն պատահականորեն հայտնաբերվել է Ստեփանակերտի մոտ[42]։ Դժբախտաբար, դրա ելուստը ջարդված է, որը հնարավորություն չի տալիս որոշել այդ դաշույնի տիպը։ Սուխումի լեռան դամբարանադաշտից հայտնաբերված դաշույնի բռնակի անտենաձև ե-

---

37 А. И. Шкурко, նշվ. աշխ., նկ. 4, էջ 100; К. Ф. Смирнов, նշվ. աշխ., նկ. 1, 1։

38 К. Ф. Смирнов, նշվ. աշխ., էջ 15։

39 А. И. Мелюкова, նշվ. աշխ., էջ 52—53։

40 В. Г. Петренко, Правобережье Среднего Приднепровья в V—III вв. до н. э. («Свод археологических источников», М., 1967, с. 42, рис. 33, 6).

41 В. Б. Виноградов, նշվ. աշխ., էջ 104; О. М. Давудов, Культура Дагестана эпохи раннего железа, Махачкала, 1974, с. 65, 96.

42 Ցուցադրվում է Ստեփանակերտի երկրագիտական թանգարանում։

լուստներն ավելի ստույգ են ընդգծված, որոնց ծայրերը հիշեցնում են թռչունի գլուխներ[43]։ Եռանկյունաձև շեղբով և թիթեռաձև ելուստով այդ դաշույնն իր անմիջական նմանակները չունի մերձսևծովյան Սկյութիայում կամ սարմատական տարածքում, ուր այդպիսի դաշույններ հազվադեպ են հանդիպում։ Մ. Ս. Պիրցխալավան դա համեմատում է Անանյինոկի դամբարանադաշտից հայտնաբերված երկաթե դաշույնի[44] հետ։ Կովկասյան լեռնաշղթայից դեպի հյուսիս ընկած հուշարձաններում հայտնաբերված նմանօրինակ դաշույններն ընդունված է թվագրել մ. թ. ա. V դարով[45]։ Այս թվագրությունը լիովին համապատասխանում է Սուխումի լեռան դամբարանում հայտնաբերված դաշույնի և մյուս բոլոր իրերի թվագրությանը։ Մ. Մ. Տրապշը, վերը նշված դաշույնը համեմատելով Մեծ Գուադիխուից (№ 8 դամբարանից) հայտնաբերված դաշույնի հետ (որն ունի ավելի վաղ թվագրություն), մեծացնում է նաև Սուխումի լեռան դամբարանադաշտից հայտնաբերված դաշույնի թվագրությունը[46]։ Մեր կարծիքով, Մեծ Գուադիխուի դաշույնի վատ պահպանվածությունը հնարավորություն չի տալիս ճշտել այդ թվագրությունը։

Անդրկովկասում սակավաթիվ հանդիպում են նաև թրերի և դաշույնների պատյանների ոսկրե ու բրոնզե ծայրապանակներ՝ մի բան, որը բնորոշ չէ անդրդրդովկասյան զենքին, բայց լավ հայտնի է սկյութական և հատկապես պարսկական դաշույններից։ Առանձնապես հետաքրքրական են կիսակլոր ծայրապանակները (բուտերոլները), որոնք հայտնաբերվել են Թլիի և նրա մերձակա շրջաններից[47]։ Այդ ծայրապանակները հիմնականում զարդարված են գալարվող կենդանիների պատկերներով։ Իրենց ձևերով մոտենալով Կելերմեսի և մելգունովյան կուրգաններից հայտնաբերված դաշույնների պատյանների ծայրապանակներին, անդրկովկասյան օրինակները տարբերվում են ավելի հիշտ կիսակլոր ուրվագծերով և հիշեցնում են Դարևկայից[48], Սարդիից[49] և անդրկովկասյան այլ հնավայրերից հայտնաբերված ծայրապանակներին[50]։ Անդրկովկասյանների վրա պատկերված է կատվի ցեղի ոլորված գիշատիչ, որն ընդունված է համարել՝ հովազ։ Միայն մի ծայրապանակի վրա հովազի փոխարեն պատկերված է գրիֆոն։ Հովազի պոչը կամ մոտեցված, կամ կպած է կենդանու գլխին։ Մերձսևծովյան սկյութների դաշույնների ծայրապանակների վրայի պատկերներին նման է Դարևկայից հայտնաբերված դաշույնի ծայրապանակի վրայի պատկերը։ Այդ նմանությունը նշել է Մ. Ս. Պիրցխալավան և համակարծիք է Ա. Ի. Շկուրկոյի հետ, ըստ որի՝ Դարևկայի ծայրապանակը

---

43 А. Н. Калантадзе, նշվ. աշխ., աղ. VIII, 19։

44 М. С. Пирцхалава, նշվ. աշխ. էջ 12։

45 А. И. Мелюкова, նշվ. աշխ., էջ 55։

46 М. М. Трапш, Труды, т. 2, с. 61.

47 Б. В. Техов, О некоторых предметах скифского звериного стиля из памятников южного склона Главного Кавказского хребта—Скифосибирский звериный стиль в искусстве народов Евразии, М., 1976, рис. 2, 1, 2, 4, 5; Б. А. Куфтин, Археологическая маршрутная экспедиция 1945 г. в Юго-Осетию и Имеретию, Тбилиси, 1949, с. 25.

48 А. И. Мелюкова, նշվ. աշխ., աղ. 19,2։

49 R. Jhirshman, Tombe princière de Ziwiyé et la debut de l'art animalier seythe, Paris, 1979. f. 1.

50 P. Bernard. A propos des bouterolees des foureoux achemenides („Revue d'archéologie", 1976, 2, p. 229, f. 2).

պատրաստված է առաջավորասիական արվեստի ազդեցությամբ և այն, իր հերթին, նպաստել է Դարևկայի դաշույնի ծայրապանակի ձևավորմանը[51]։

Կենդանիների պատկերների նման տեղադրություն նկատվում է նաև աքեմենյան դաշույնների ծայրապանակների վրա, բայց դրանցում, որպես կանոն, հանդես են գալիս ցուլը կամ խոյը։ Անդրկովկասյան ծայրապանակների պատկերները իրենց ոճով և մանրամասնությունների մեկնաբանությամբ տարբերվում են ինչպես աքեմենյաններից, այնպես էլ Դարևկայում հայտնաբերվածներից։ Գրականության մեջ արդեն նշվել է անդրկովկասյան հովազների պատկերների նմանությունը Զիվիեի գանձի իրերի վրա պատկերված հովազների պատկերներին[52]։ Ճիշտ է, այդ գանձից հայտնի միակ ծայրապանակի վրայի պատկերն իր հորինվածքով խիստ տարբերվում է անդրկովկասյանից, բայց թրի դաստակի ոսկե գլխիկի վրա պատկերված կենդանին, անկասկած, նման է հովազի։ Այդ նմանությունը մեծ նշանակություն ունի անդրկովկասյան ծայրապանակների թվագրության համար (մ. թ. ա. VII դ.—մ. թ. ա. VI դ. սկիզբ), որը համընկնում է Թլիի դամբարանադաշտից հայտնաբերվածների թվագրության հետ։

Թլիի դամբարանադաշտում, բացի վերը նշվածներից, կա գրիֆոնի ձևի մի այլ ծայրապանակ, որն իր ոճով մոտ է Զիվիեից հայտնաբերվածներին[53], իսկ Դվանիի դաշույնի ծայրապանակի ծայրը ոլորված է, որի ձևը հայտնի է Հյուսիսային Կովկասից գտնված սկյութական նյութերից։

Ինչպես նկատում ենք, Անդրկովկասում հայտնաբերված կիսակլոր ծայրապանակները սակավաթիվ են, և դրանց տարածման շրջանակները շատ ավելի նեղ, քան սկյութական տիպի դաշույններինը։ Հովազի պատկերներով կիսակլոր ծայրապանակները, Հարավային Օսեթիայի սահմաններից դուրս հայտնի չեն։ Եթե այդ իրերի ժամանակագրական և մշակութային տեղը որոշվում է բավական ստույգ, ապա արտադրման կենտրոնը որոշելը առայժմ դժվար է։ Չնայած դրանց ոճական զուգահեռները կարելի է գտնել Անդրկովկասի մի քանի այլ սկյութական հուշարձաններում՝ օրինակ, Բրիլիից հայտնաբերված ոսկրե ձողերի վրա, այնուամենայնիվ այդ պատկերները ոչ մի կապ չունեն անդրկովկասյան արվեստի հետ և անհիմն են դրանց տեղական արտադրության մասին եղած ենթադրությունները[54]։ Նշենք, որ ծայրապանակների արտադրությունը, որտեղ էլ որ արտադրվել են, տևել է շատ կարճ և պատրաստվել են որոշակի պատվիրատուի համար։

Ավելի վստահությամբ կարելի է խոսել դաշույնների՝ թերևս մասնակի, տեղական արտադրանքի մասին[55]։ Այս ենթադրությունը հաստատվում է դրանց հայտնաբերման մեծ քանակով, ինչպես նաև՝ կոլխիդյան դաշույնների բրոնզե պատյանի ձևերով ու դաշույնների որոշ տեղայնական առանձնահատկություններով (օրինակ՝ Բրիլիի դաշույնների երկար գլխիկները)։ Ենթադրություններ

---

51 М. С. Пирцхалава, նշվ. աշխ., էջ 17։

52 Նույն տեղում, Б. В. Техов, О некоторых предметах скифского звериного стиля..., с. 158.

53 Б. В. Техов, նշվ. աշխ., նկ. 2, 6։

54 Նույն տեղում, էջ 161—162։

55 М. М. Трапш, Новая археологическая находка в Абхазии, с. 142; С. И. Крупнов, Древняя история Северного Кавказа, М., 1960, с. 64; М. С. Пирцхалава, նշվ. աշխ., էջ 17։

կան նաև սկյութական դաշույնի անդրկովկասյան ծագման[56] կամ Առաջավոր Ասիայից այդ զենքի Անդրկովկասի վրայով մերձսևծովյան Սկյութիայում տարածվելու մասին[57]։ Այդ ենթադրությունները, սակայն, չեն հաստատվում, քանի որ Անդրկովկասում լրիվ բացակայում են ինչպես դրանց նախատիպերը, այնպես էլ այդ զենքի որևէ ածանցական արտադրությունն ավելի ուշ ժամանակաշրջանում։ Հիշյալ հանգամանքը խոսում է ոչ միայն այդ ձևի օտար բնույթի, այլև Անդրկովկասում դրա կարճատև օգտագործման մասին։

Ինչ վերաբերում է այն կարծիքին, որ Անդրկովկասը մի յուրահատուկ կամուրջ է հանդիսացել, որով դաշույններն Առաջավոր Ասիայից ներթափանցել են մերձսևծովյան Սկյութիա, կապված է այդ ձևի առաջավորասիական ծագում ունենալու տեսության հետ։ Դաշույնի իրանական ծագման մասին կարծիքը հայտնել է Մ. Ն. Ռոստովցևը, որը սկյութական բոլոր տիպի զենքերի հիմքը համարում է իրականը[58]։ Նույն կարծիքին է նաև Վ. Հիտերսը[59]։ Այս տեսության օգտին են խոսում մելգունովյան և կելերմեսյան թրերը, որոնց զարդերն ունեն վառ ընդգծված առաջավորասիական ավանդույթներ։ Հետագայում Բ. Բ. Պիոտրովսկին համոզիչ կերպով ցույց տվեց այդ թրերի զարդերի ուրարտական լինելը և եկավ այն եզրակացության, որ դրանք պատրաստելիս սկյութական վարպետներն օգտվել են ուրարտական արվեստի նմուշներից[60], իսկ հայտնաբերված նոր նյութերը հնարավորություն տվեցին սկյութական թրերի զարդամոտիվների գծեր գտնել Զիվիեի արվեստում[61]։ Վ. Գ. Լուկոնինը Զիվիեից հայտնաբերված իրերի զարդարվեստում տեսնում է այն արվեստի սկզբնաղբյուրը, որի վերջնական, զարգացած ոճը արտացոլվել է մելգունովյան և կելերմեսյան թրերի պատյանների զարդանախշման մեջ[62]։ Ռ. Դ. Բառնետը Զիվիեի գանձը, ամուդարյան գանձի դաշույնի պատյանները, կելերմեսյան ու մելգունովյան թրերը համարում է բուն մեդական արվեստի հուշարձաններ[63]։ Սակայն այս դիտողությունները վերաբերում են նախշազարդման արվեստին և ոչ թե ձևերին։ Սկյութական թրի հնագույն ձևի Առաջավոր Ասիայում երևան գալու թեզը ամուր մտել է գրականության մեջ[64]։ Այն հիմնավորվում է ինչպես հունական հեղինակների վկայություններով, որոնք պարսկական և մեդական թրերը աքինակներ էին անվանում, այնպես էլ այն փաստով, որ այդ զենքը հիմնականում, պատկերաքանդակների իր ձևով, լայն տարա-

---

56 Г. Ф. Гобеджишвили, նշվ. աշխ., էջ 101, նույնի՝ Памятники древнегрузинского горного дела и металлургии в окрестностях села Геби («Сообщения АН Груз. ССР», 1952, т. XIII, с. 188).

57 М. С. Пирцхалава, նշվ. աշխ., էջ 13։

58 М. Н. Ростовцев, Эллинство и иранство на юге России, Петроград, 1918, с. 69; նույնի՝ Скифия и Боспор, Л., 1925, с. 470.

59 W. Hinters, Das schwert der Scythen und Sarmaten in Südrussland, Berlin, 1928, S. 16.

60 Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, с. 252; նույնի՝ Скифы и Урарту (доклад, прочитанный на втором международном симпозиуме по армянскому искусству, Ереван, 1978, с. 7, 10).

61 R. D. Barnett, Median art·Iranica („Antiqua", t. 2, 1962, f. 1).

62 В. Г. Луконин, Искусство древнего Ирана, М., 1977, с. 32.

63 R. D. Barnett, նշվ. աշխ., էջ 62։

64 А. И. Мелюкова, նշվ. աշխ., էջ 60; М. И. Артамонов, Сокровища саков, М., 1973, с. 97; М. С. Пирцхалава, նշվ. աշխ., էջ 13։

ծում է գտել Մերձավոր արևելքում։ Բայց, ինչպես տեսնում ենք, Առաջավոր Ասիայում դաշույնը մ. թ. ա. VI—V դդ. առաջ հայտնի չէր։ Պերսեպոլսի բարձրաքանդակների և ամուդարյան գանձի պատյանների վրա պահպանված դաշույնների պատկերներն այդ ժամանակաշրջանից վաղ չեն թվագրվում։ Այդ թվագրմանը մոտ են նաև Եգիպտոսից և Կարքեմիշից (Սիրիա) հայտնաբերված և Բրիտանական թանգարանում պահվող դաշույնների փայտե պատյանների փոքրիկ մանրակերտները (մոդելները)[65]։ Զիվիեից հայտնաբերված թրի դաստակի գլխիկը, պատյանի մասերը և ծայրապանակը հնարավորություն են տալիս ենթադրել, որ այդտեղ պետք է լիներ մ. թ. ա. VII դ. թվագրվող դաշույն[66]։ Ճիշտ է, այս ենթադրության դեմ, և հատկապես այն կարծիքի, որ դաստակի գլխիկը պատկանել է սկյութական թրին, առարկել է Ե. Վ. Չերնենկոն[67], բայց բոլոր դեպքերում դաշույնների ձևերի կազմավորումը մ. թ. ա. VII դ. II կեսում հաստատվում են նաև անդրկովկասյան նյութերով։ Ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Մերձավոր արևելքում հայտնի չեն ո՛չ դաշույնների ավելի վաղ ձևեր, և ո՛չ էլ դրանց նմանակները։ Թեև Ռ. Դ. Բառնետը Թալիշի դաշույնները և Համադանի հայտնի դաշույնը (որոնց դաստակի գլուխները զարդարված են առյուծի գլուխներով) համեմատում է սկյութական դաշույնների հետ, բայց դա շատ ընդհանուր համեմատություն է։ Միևնույն ժամանակ նույն հետազոտողը ենթադրում է, որ դաշույնը պատկանում է Միջագետքի զենքերի տիպին և հենց այնտեղ պետք է փնտրել դրա ակունքները[68]։

Ն. Լ. Չլենովան սկյութական դաշույնների սրտաձև ելուստների նախատիպ է համարում առաջավորասիական և կովկասյան մի շարք դաշույնների դաստակների և շեղբերի վերին մասերի վրա եղած կտրվածքները[69], սակայն դա էլ լրիվ չի բացատրում մ. թ. ա. VI դ. դաշույնի ամբողջական ավարտուն ձևի առաջացումը։

Անդրկովկասյան դաշույնները, որոնք, անկասկած, պատկանում են սկյութական զենքի ամենահնագույն ձևերին, այս հարցի լուծման ժամանակ չեն կարող անտեսվել։ Չի կարելի հաշվի չառնել, որ չնայած առանձին նմուշների ունեցած որոշակի յուրահատկություններին՝ Անդրկովկասում հայտնաբերված սկյութական թրերը և դաշույնները անվիճելիորեն մոտ են մերձսևծովյան և Հյուսիսային Կովկասի սկյութական զենքին, քան առաջավորասիականին։ Սա համոզիչ է, քանի որ նույն ժամանակագրական-մշակութային խմբի սկյութական իրերի, ինչպես, օրինակ, վերը նկարագրված ծայրապանակների պատկերների կապը հարավի հետ բավական պարզ է։ Այս կապակցությամբ հետաքրքրական է նշել սկյութական հնագույն թրերի և դաշույնների այն առանձնահատկությունները, որոնք կարող էին վերջիններս ժառանգել նախորդ շրջանի զենքից։ Դրանք են՝ ա) դաստակի ձողի բաժանումը ուղղահայաց ակոսներով։ Նման բաժանումը արդարացվում է բրոնզե բռնակների համար, որոնք

---

65 R. D. Barnett, նշվ. աշխ., էջ 79, աղ. II, в, с.

66 R. Jhirshman, նշվ. աշխ. էջ 20—23, В. Г. Луконин, նշվ. աշխ., էջ 30։

67 Е. В. Черненко, Персидские акинаки и скифские мечи («Искусство и археология Ирана и его связь с искусством народов СССР с древнейших времен». Тезисы докладов, М., 1979).

68 R. D. Barnett, նշվ. աշխ., էջ 95։

69 Н. Л. Членова, Происхождение и ранняя история племен Тагорской культуры, М., 1967, с. 21.

հագցվում էին երկաթե ձողի վրա[70]։ բ) Բրոնզե շրջանակաձև պատյաններ, որոնք հագցվում էին երկաթե ձողի վրա և լավ հայտնի են Հյուսիսային Կովկասի կամենոմոստյան տիպի դաշույններից։ գ) Ստույգ ընդգծված ելուստներ, որոնց թևերն իջեցված են ներքև։ Թվում է, իրավացի է Ե. Վ. Չերնենկոն, որ հենց այս դաշույններում է տեսնում այն հիմքը, որով ձևավորվում է բուն սկյութական զենքը[71]։ Վերջինիս կարծիքով պարսկական դաշույնները ակընհայտորեն տարբերվում են սկյութական թրերից և դաշույններից, չնայած ունեն ընդհանուր ծագում։

Այսպիսով, մ. թ. ա. VII—VI դդ. Անդրկովկաս են ներթափանցել կամ տեղում արտադրության համար հիմք են ծառայել Կովկասյան լեռնաշղթայից դեպի հյուսիս ընկած շրջաններից բերված զենքի տեսակները։ Հայտնաբերված նյութերը հիմք չեն տալիս պնդելու, թե դաշույնները Առաջավոր Ասիայից, Անդրկովկասի վրայով, ներթափանցել են Սկյութիա։

СКИФСКИЕ МЕЧИ И КИНЖАЛЫ, ОБНАРУЖЕННЫЕ В ЗАКАВКАЗЬЕ

МАРИЯ ПОГРЕБОВА (Москва), СТЕПАН ЕСАЯН

Резюме

Многочисленную группу предметов скифской материальной культуры составляют в Закавказье мечи и кинжалы, большинство которых локализуется либо на территории Грузии, главным образом Западной и Центральной, либо в Армении, где они встречаются в сочетании с предметами скифского и урартского происхождения.

Подавляющее большинство скифских кинжалов и мечей, найденных в Закавказье, характеризуется брусковидным навершием и сердцевидным, бабочковидным или почковидным перекрестием и относится к наиболее архаичному типу, который бытовал здесь в основном во второй половине VII—начале VI вв. до н. э. Помимо указанной основной группы известно несколько отдельных экземпляров других типов, относящихся к VI—V вв. до н. э.

Большое число обнаруженных в Закавказье акинаков, наличие синкретической формы, сочетающей типично скифские и местные элементы, а также некоторые локальные особенности позволяют допустить вероятность местного производства части найденных в Закавказье акинаков.

Нельзя также согласиться с гипотезой, согласно которой в Причерноморскую Скифию акинак попал из Передней Азии через Закавказье. Значительно более перспективны поиски его прототипов на Северном Кавказе и в Предкавказье.

---

70 А. И. Шкурко, նշվ. աշխ., նկ. 4։

71 Е. В. Черненко, նշվ. աշխ., էջ 90—91։